ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/32183-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի (Կ-821-16.04.2024-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում՝

Նախագծի 2-րդ հոդվածի Հոդվածի 1-ին մասի 1-ին կետում առաջարկում ենք լրացնել «գ» ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

«գ. «դեպքի» բառը փոխարինել «դեպքերի» բառով.»:

Առաջարկը պայմանավորված է կատարվող այլ փոփոխությամբ, այն է՝ Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսվում է Օրենքի 38-րդ հոդվածի «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ եւ 5-րդ մասերով» բառերով:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում՝

1. Նախագծի 1-ին հոդվածում առաջին նախադասությունից առաջարկում ենք հանել «ՀՕ-110-Ն» բառը, իսկ «քաղաքացիական» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը,

   Առաջարկը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված կարգավորմամբ:

2. Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 7-րդ կետը առաջարկում ենք շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«7) հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:»:

Առաջարկը պայմանավորված է տերմինների և սահմանումների միատեսակ կիրառությունն ապահովելու «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջով և արդեն ձևավորված դատական պրակտիկայի պահպանման նպատակահարմարությամբ: Մասնավորապես, համանման իրավիճակում Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը: Իր հերթին, Վճռաբեկ դատարանը իր 26.12.2014թ.-ի թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով որոշմամբ անդրադարձել է նշված կանոնի մեկնաբանմանը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ